Կ-544[2]-30.03.2023-ԳԿ-011

Նախագիծ

Երկրորդ ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

# «ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-260-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 9-րդ և 15-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

2) 19-րդ կետում՝

ա. «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 20-րդ կետ.

«20) Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե:»:

**Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Գիտության կոմիտեն և Բարձրագույն որակավորման կոմիտեն միաձուլել՝ ստեղծելով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, հաստատվում է սույն օրենքով վերակազմակերպված Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նոր կանոնադրությունը:

4. Գիտության կոմիտեի և Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահները շարունակում են պաշտոնավարել մինչև Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կանոնադրության ուժի մեջ մտնելու օրը:

Երկրորդ ընթերցում

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-260-Ն օրենքի (~~***այսուհետ՝ Օրենք***~~) 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝

3) 9-րդ և 15-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

4) 19-րդ կետում՝

ա. «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 20-րդ կետ.

«20) Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե:»:

**Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

6. Գիտության կոմիտեն և Բարձրագույն որակավորման կոմիտեն միաձուլել՝ ստեղծելով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե:

7. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, հաստատվում է սույն օրենքով վերակազմակերպված Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նոր կանոնադրությունը:

8. Գիտության կոմիտեի և Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահները շարունակում են պաշտոնավարել մինչև Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կանոնադրության ուժի մեջ մտնելու օրը:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (Կ-544-30.03.2023-ԳԿ-011/0) օրենքի առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկների

| N | Առաջարկության հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացություն | Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան | Հոդված 1, առաջին մաս, | Նախագծի 1-ին և 2-րդ «կետից» բառը փոխարինել «պարբերությունից», իսկ «կերտեր» բառը՝ «պարբերություններ» բառով | Ընդունվել է | Ընդունվել է |
| | ՀՀ ԱԺ պատգամավոր Նարեկ Բաբայան | | 10. Պետության կողմից հիմնադրված գիտական կազմակերպության ղեկավարի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գիտական կազմակերպության ղեկավարի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝ նա դիմում է այդ մասին, լրացել է նրա 65 տարին, դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող կամ | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մահացած»: | | |
| 2. | ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան | Հոդված 4, 2-րդ կետ | Լրացվող 2-4-րդ մասերը հանել | Ընդունվել է | Ընդունվել է |
| | ՀՀ կառավարություն | Հոդված 9, 2-րդ մաս, 11-րդ կետ | Հանել «Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն» բառերը | Ընդունվել է | Ընդունվել է |
| 3. | ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան | Հոդված 11, 1-ին կետ | «հաջորդող» բառը փոխարինել «երկրորդ» բառով | Ընդունվել է | Ընդունվել է |
| 4 | ՀՀ կառավարություն | Հոդված 12-րդ, 3-րդ մաս | Հանել «կադրերի» բառը | Ընդունվել է | Ընդունվել է |
| | ՀՀ կառավարություն | Հոդված 15 | Լրացնել «իրավակա» բառից առաջ լրացնել «նորմատիվ» բառը | Ընդունվել է | Ընդունվել է |